ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/17270-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-798-15.03.2024-ՖՎ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառն առաջարկում ենք փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում կատարել մի քանի լրացում: Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, այն է. «Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը»:

2. Նախագծի 1-ին հոդվածում «1.2» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «1.2-րդ» ձևակերպմամբ՝ դասական թվականների ճիշտ գրելաձևը ապահովելու նպատակով:

3. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «գնահատումը» բառից առաջ լրացնել «բյուջետային ծրագրերը» բառերը՝ տարընկալումները բացառելու նպատակով, քանի որ տվյալ ֆինանսական տարում բյուջետային ծրագրերի գնահատումը ենթադրում է որոշակի՝ ընտրանքային ծրագրերի՝ այլ ոչ թե բոլոր բյուջետային ծրագրերի գնահատումները:

4. Նախագծի երկրորդ հոդվածի 2-րդ կետով լրացվող նոր 4-րդ մասում և Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «Պետական բյուջետային ծրագրեր» բառերը փոխարինել «Բյուջետային ծրագրեր» բառերով: Փոփոխությունը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, որով սահմանված է. «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի

հերթականությամբ»:

5. Նախագծի երկրորդ հոդվածի 2-րդ կետով լրացվող նոր 4-րդ մասում «կառավարության անունից լիազոր մարմինը» բառերը փոխարինել «պետական լիազորված մարմինը» բառերով: Փոփոխությունը պայմանավորված է «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 1.2. Հոդվածի 13-րդ մասով, համաձայն որի «Պետական լիազորված մարմինն է պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) լիազորած պետական կառավարման մարմինը»:

6. Նախագծի 3-րդ հոդվածի վերնագրում «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ